ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների/«Հայկական ծրագրեր»/ ՄԱ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

«21» «01» 2022թ

ք. Երևան

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողով՝ Արա Խաչատրյան /ՊՍ ղեկավար/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան /ԳՀ/

1. Մասնակցի առաջարկած գնի և ընթացակարգի արդյունքների մասին.

1.1 Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Չափաբաժին	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակցի անվանումը	
		«Հայկական ծրագրեր» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	360000	326667	392000*

*Գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը

2. Գնահատման գործընթացի կասեցման և միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին.

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ին հրավիրել ներկայացված գնի նվազեցման շուրջ բանակցությունների ս.թ հունվարի 26-ին, ժամը 12:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 1, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 26.01.2022թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողով՝ Արա Խաչատրյան /ՊՍ ղեկավար/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան /ԳՀ/

Բացակայում էր՝

«Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչը

3. **Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ բանակցությունների վարման մասին.**

3.1 «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայության պատճառով, վերջիններիս հայտով ներկայացված գնային առաջարկը թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 1, դեմ 0:

4.Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.1 կետը՝ «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 1, դեմ 0:

5. Գնահատման արդյունքների մասին.

5.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած, հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 1, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Արա Խաչատրյան

_____ Աննա Սիմոնյան /քարտուղար/